

վերջին օրն աւարտեց Կիրակոս Վ.ի Պատմագրութեան ընդօրինակութիւնը, զոր Երեւան սկսած էր (Տաշեան, անդ էջ 408—411): Ինչպէս ասոր յիշատակարանին մէջ կ'ըսէ, իր վարժապետն ու ծայրագունութեան աստիճան տուող Սրապիոն եպիսկոպոսն՝ Խախտեաց գաւառի Օձտեղայ գիւղէն էր (բոլորովին տարբեր վերոյշեալ Սրապիոն կաթողիկոսէն):

Գրիգոր Վ. կ'ուղէր դարձեալ Երեւան դառնալ, սակայն նոյն քաղաքը Պարսից Շահը գրաւած ըլլալուն՝ չկրցաւ երթալ: 1605ին դարձեալ Երեւան Սաղմոսավանքը հաստատուած էր, ուրկէ նոյն տարին Էջմիածին գնաց՝ միւռոնօրհնէքի հրաւիրուած ըլլալով: Նոյն 1605ին գացած է նաեւ Կաֆա (Թէոդոսիա), սակայն տեղւոյն քահանայն եւ Սաֆար իշխանը զինք կը նախատեն, բրածեծ կ'ընեն, եւ կը վռնտեն, ինչպէս վարուած էին քիչ յառաջ նաեւ հրաժարեալ Սրապիոն կաթողիկոսի նուիրակ Բարսեղ Վ.ի հետ: Գրիգոր Վ. կը նաևէ Պոլիս Կողովի վրայէն, եւ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ կը հիւրընկալուի, Գր. Վ. Կեսարացի Պատրիարքին օրով: 1606—7ին Ռոտոսթոյ (Թէքիրտաղ) կ'երթայ հայրենակիցները տեսնելու, եւ Պոլիս կը դառնայ: Յետոյ Եգիպտոսի վրայէն Երուսաղէմ կ'երթայ՝ Գաւիթ Մերտինցի Պատրիարքին օրով, եւ երկու տարի՝ մինչեւ 1609 կը մնայ: Նոյն տարին Պոլիս կը դառնայ եւ 1610ին Կամախեցիներ իրենց երկիրը Կամախ կ'առաջնորդէ: 1612ին Երուսաղէմ վերադառ-